ՀՀ Կրթության և Գիտության
Նախարարություն
«Երևանի
հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների
թիվ 17 հատուկ դպրոց»
Պետական
ոչ առևտրային կազմակերպություն

Ministry of Education and Science
Republic of Armenia
,Yerevan
Special School N 17 for the
children with breached-movement
extremitiesե
State non-trade
Organization

ՀՀ ք.Երևան, Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական փ.-41 ☎ 646601, 646789
RA Yerevan, II Nork Massive, Moldovakan 41 ☎ 646601, 646789

01.12.2023թ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

<<Հայկազունք>>ՍՊԸ-ի

Տնօրեն՝ Ս. Հարությունյանին

Հարգելի Ս. Հարությունյան

<<Երևանի թիվ 17 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Գնորդ/ և << Հայկազունք >>ՍՊԸ-ի /այսուհետ Վաճառող/ միջև 16.12.2022թ-ին կնքված 17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/01 N4 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ պայմանագիր/ շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելածով ապրանքները: Սակայն 23.11.2023թ-ից խախտելով մատակարարման ժամկետները և պայմանագրով սահմանված դրույթները, չի պատասխանում հեռախոսազանգերին, չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքները :

Հաշվի առնելով վերոգրյալը՝Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով <<Երևանի թիվ 17 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ-ը հարկադրված է 2023թ-ի դեկտեմբերի 01-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք ,որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 331230/երեք հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր երեսուն/ՀՀ դրամի և 220820 /երկու հարյուր քսան հազար ութ հարյուր քսան/ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին /**ՀՀ ֆինանսների նախարարություն Հ/Հ 900018002262/**

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել՝<<Գնումների մասին >>ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա –րդ կետի համաձայն << Հայկազունք >>ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

<<Երևանի թիվ 17 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Վ. Եսայան